Հայաստանի 2025 թ. Հայաստանի Կոռուպցիայի ընկալման համաթիվը հաշվարկելու համար օգտագործված աղբյուրների ամփոփ նկարագրություն

1. Բերթելսմանի հիմնադրամի 2026թ. տրանսֆորմացիոն համաթիվ (STI)

2. Ֆրիդոմ Հաուսի Անցումային փուլում գտնվող պետություններ 2024թ (FH)

3. Գլոբալ Ինսայթի Երկրի ռիսկայնության 2024 թ.վարկանիշ (GI)

4. Փոլիթիքլ Ռիսքս Սերվիսիզ Գրուփ Ինթերնեշնլի Երկրի ռիսկայնության 2025թ. ուղեցույց (PRS)

5. Համաշխարհային տնտեսական ֆորումի Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցում 2025թ. (WEF)

6. Ժողովրդավարության բազմազանության ծրագիր 2025թ. (VDEM)

Բերթելսմանի հիմնադրամի 2026թ. տրանսֆորմացիոն համաթիվ

Հրապարակման տարի - 2026

Գնահատման տեսակ - Որակական փորձագիտական հարցում

Տվյալներ տրամադրող - Բերթելսմանի հիմնադրամ

Տրանսֆորմացիոն համաթիվն ապահովում է բարեփոխումների դերակատարների միջև դրական փորձի փոխանակման շրջանակ: Այդ շրջանակում Բերթելսմանի հիմնադրամի տրանսֆորմացիոն համաթիվը (ԲՏՀ-BTI) հրապարակում է երկու համաթվերի դասակարգումներ՝ Կարգավիճակի համաթվի և Կառավարման համաթվի, որոնք հիմնված են աշխարհի 137 երկրներում անցկացվող խորացված գնահատումների վրա: Համաթվերի արժեքները հիմնված են երկրների վերաբերյալ մանրամասն զեկույցների վրա, որոնք, օգտագործելով 17 չափանիշներ, գնահատում են իրավիճակը:

Կոռուպցիային առնչվող հարց(եր)

Հարց 3.3 Որքա՞ն հաճախ են հետապնդվում կամ պատժվում իրենց պաշտոնը չարաշահող պետական պաշտոնատար անձինք:

Գնահատումը կատարվում է 1-ից 10 սանդղակի վրա, որտեղ **1** (ամենացածր) է գնահատվում «Պաշտոնատար անձինք կարող են օրենքը խախտել և կոռուպցիայի մեջ ներգրավված լինել առանց վախենալու դրանից բխող իրավական հետևանքներից կամ դրա համար հանրային պարսավանքի արժանանալուց» պատասխանը, իսկ **10** (ամենաբարձր)՝ «Օրենքը խախտող կամ կոռուպցիայի մեջ ներգրավված պաշտոնատար անձինք խստորեն հետապնդվում են՝ ելնելով գործող օրենքներից ,և միշտ արժանանում են հանրային պարսավանքի» պատասխանը:

Հարց 15.3 Որքա՞ն հաջող են ձեր իշխանությունները զսպում կոռուպցիան:

Գնահատումը կատարվում է 1-ից 10 սանդղակի վրա, որտեղ **1** (ամենացածր) է գնահատվում «Իշխանությունները չեն կարողանում զսպել կոռուպցիան, և առկա չեն բարեվարքության մեխանիզմները» պատասխանը, իսկ **10** (ամենաբարձր)՝ «Իշխանությունները հաջողությամբ զսպում են կոռուպցիան, և բարեվարքության մեխանիզմներն առկա են ու արդյունավետ գործում են» պատասխանը:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված երկրների թիվը և տվյալների հավաքագրման ժամանակահատվածը

ԲՏՀ-ն ներառում է աշխարհի 137 երկրներ և տարածքներ: Համաթվի համար տվյալները հավաքագրվել են 2023թ. հունվարից մինչև 2025թ. հունվարը:

Ֆրիդոմ Հաուսի Անցումային փուլում գտնվող պետություններ 2024թ

Հրապարակման տարի - 2024 (օգտագործվել է նույն հետազոտությունը, ինչ 2024թ. ԿԸՀ հաշվարկելու համար)

Գնահատման տեսակ - Որակական փորձագիտական հարցում

Տվյալներ տրամադրող – Ֆրիդոմ Հաուս

Անցումային փուլում գտնվող պետությունների զեկույցները գնահատում է Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ 29 պետություններում ժողովրդավարացման գործընթացը և այդ երկրների մի շարք ընտրված վարչական ոլորտներում: Այդ զեկույցները կենտրոնանում են ժողովրդավարական գործընթացներում առկա առաջընթացի և հետընթացի վրա: Յուրաքանչյուր զեկույցում գնահատվում են հետևյալ թեմատիկ ոլորտները. ազգային ժողովրդավարական կառավարում, ընտրական գործընթացներ, քաղաքացիական հասարակություն, անկախ լրատվամիջոցներ, տեղական ժողովրդարական ինքնակառավարում, դատական համակարգ, և կոռուպցիա:

Կոռուպցիային առնչվող հարց(եր)

Ֆրիդոմ Հաուսի փորձագետներին խնդրվում է ուսումնասիրել մի շարք ցուցիչային հարցեր, ներառյալ.

- Արդյո՞ք կառավարությունն իրականացնում է արդյունավետ հակակոռուպցիոն նախաձեռնություններ:
- Արդյո՞ք երկրի տնտեսությունը զերծ է պետական չափազանց մեծ միջամտությունից:
- Արդյո՞ք կառավարությունը զերծ է բյուրոկրատական չափազանց մեծ միջամտությունից, գրանցման ավելոր պահանջներից և այլ վերահսկողական գործառույթներից, որոնք մեծացնում են կոռուպցիայի մեջ ներգրավվելու հնարավորությունները:
- Առկա՞ են, արդյոք, տնտեսական կյանքում իշխանությունների միջամտության էական սահմանափակումներ:
- Առկա՞ են, արդյոք, գույքի և եկամուտների հայտարարագրումը պարտադրող և շահերի բախումը կանխող օրենքներ:
- Արդյո՞ք իշխանությունները հրապարակում են իրենց մոտ թափուր աշխատատեղերի հայտարարությունները և իրենց կողմից կնքված պայմանագրերը:
- Արդյո՞ք պետությունն իրականացնում է արդյունավետ օրենսդրական կամ վարչական գործընթացներ, մասնավորապես այնպիսիք, որոնք զերծ են քաղաքականապես խտրական մոտեցումներից, որոնք ուղղված են կանխարգելելու, հետաքննելու և քրեական հետապնդման ենթարկելու պետական պաշտոնյաների և քաղաքացիական ծառայողների կոռուպցիան:
- Արդյո՞ք ազդարարները, հակակոռուպցիոն ակտիվիստները, քննիչները և լրագրողներն ունեն այնպիսի իրավական պաշտպանվածություն, որի դեպքում նրանք ապահով զգան կաշառակերության և կոռուպցիայի դեպքերի մասին հաղորդում տալու դեպքերում:
- Արդյո՞ք կոռուպցիոն մեղադրանքները լայնորեն և բազմակողմանիորեն լուսաբանվում են լրատվամիջոցներում:
- Արդյո՞ք հանրությունը ցուցաբերում է կոշտ անհանդուրժողականություն պետական պաշտոնյաների կոռուպցիայի նկատմամբ:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված երկրների թիվը և տվյալների հավաքագրման ժամանակահատվածը

2023 թվականին գնահատվել է 29 երկիր՝ այն նույն երկրներն ինչ նախկինում: 2024 թվականի զեկույցը գնահատում է 2023թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը տեղ գտած զարգացումները: Մինչև 2024 թվականն այդ 29 երկրները գնահատվել են տարեկան պարբերականությամբ, սակայն, 2025 թվականին հետազոտությունը դադարեցվել է:

Էս Էնդ Փի Գլոբալ Ինսայթի (S&P Global Insight) Երկրի ռիսկայնության 2023 թ.վարկանիշ

Հրապարակման տարի – 2024թ. 2024 (օգտագործվել է նույն հետազոտությունը, ինչ 2024թ. ԿԸՀ հաշվարկելու համար)

Գնահատման տեսակ - Առևտրային բիզնեսի փորձագիտական գնահատում

Տվյալներ տրամադրող - Էս Էնդ Փի Գլոբալ Ինսայթի Գլոբալ ռիսկի ծառայություն

Գլոբալ Ինսայթի Ռիսկերի դասակարգման համակարգը գործում է 1999 թվականից և տրամադրում է աշխարհի ավելի քան 200 երկրներում/տարածքներում ռիսկի միջավայրի վերլուծություններ՝ հիմնված 6 գործոնների վրա: Այդ գործոններն են քաղաքական, տնտեսական, իրավական, հարկային, գործառնական (օպերացիոն) և անվտանգային ռիսկերը: Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ) հաշվարկում օգտագործվող կոռուպցիոն ռիսկի համաթիվը ստացվում է Գլոբալ Ինսայթի Գործարարության պայմանների և Ռիսկի ցուցանիշներից:

Կոռուպցիային առնչվող հարց(եր)

Փորձագետները պետք է գնահատեն իրենց գործունեության իրականացման, փոքր քանակությամբ ապրանքներ ներմուծելու/արտահանելու թույլտվություն ստանալու կամ ամենօրյա թղթաբանության հետ կապված՝ անհատների/ընկերությունների կողմից կաշառքի կամ կոռուպցիոն այլ դրսևորումներին բախվելու ռիսկերը: Դա վտանգում է երկրում գործունեություն իրականացնելու՝ ընկերությունների կարողությանը կամ սպառնում է նրանց ենթարկել իրավական կամ կարգավորիչ բնույթի տույժերի կամ էլ պատճառել վնաս նրանց հեղինակությանը: Ցուցիչները չափվում են 1-ից (առավելագույն կոռուպցիա) մինչև 5 (նվազագույն կոռուպցիա) սանդղակի վրա 0,5 քայլով:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված երկրների թիվը և տվյալների հավաքագրման ժամանակահատվածը

Գնահատումն ընդգրկում է 207 երկիր/տարածք:

Տվյալները հավաքագրվել են 2023թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Փոլիթիքլ Ռիսքս Սերվիսիզ (ՓՌՍ - PRS) Գրուփ Ինթերնեշնլի Երկրի ռիսկայնության 2025թ. ուղեցույց

Հրապարակման տարի - 2025

Գնահատման տեսակ – Ռիսկի գնահատում Երկրների ռիսկայնության միջազգային ուղեցույցի (ԵՌՄՈՒ - ICRG)

Տվյալներ տրամադրող - ՓՌՍ Գրուփ ընկերություն

Սկսած 1980 թվականից ընկերության Երկրի ռիսկի միջազգային ուղեցույցն (ԵՌՄՈՒ - ICRG) ամսական կտրվածքով տալիս է երկրների/տարածքների քաղաքական, տնտեսական և ֆինանսական ռիսկերի վարկանիշները, որոնք կարևոր են միջազգային բիզնեսի համար: ԵՌՄՈՒ-ն այժմ մշտադիտարկում է աշխարհի 140 երկրներ/տարածքներ: ԵՌՄՈՒ-ի վարկանիշները հիմք են ստեղծում յուրաքանչյուր երկրի հնարավորությունների և վտանգների վաղ նախազգուշացման համակարգի համար:

Կոռուպցիային առնչվող հարց(եր)

Սա հանդիսանում է քաղաքական համակարգում առկա կոռուպցիայի գնահատում: Կոռուպցիայի առավել տարածված ձևերը, որոնց ուղղակիորեն բախվում են գործարարները, դա ֆինանսական կոռուպցիան է՝ ներմուծման և արտահանման թույլտվություններ ստանալու, արտարժութային հսկողության, հարկային պարտավորությունների գնահատման, ոստիկանության կողմից պաշտպանության կամ վարկեր ստանալու հետ կապված կաշառքների պահանջի տեսքով: Գնահատման ուշադրության կենտրոնում են չափից ավելի հովանավորչության, նեպոտիզմի, աշխատանքի ընդունելիս խտրական վերաբերմունքի, ապօրինի արտոնությունների փոխադարձ տրամադրման, կուսակցությունների գաղտնի ֆինանսավորման և, քաղաքականության և բիզնեսի միջև կասկածելի կապերի տեսքով փաստացի կամ հնարավոր կոռուպցիան:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված երկրների թիվը և տվյալների հավաքագրման պարբերականությունը

Ուսումնասիրության մեջ ընդգրկված է 141 երկիր, որոնք գնահատվում են ամսական կտրվածքով: ԿԸՀ 2025-ի հաշվարկի համար վերցվել է 2024թ. սեպտեմբերից մինչև 2025թ. օգոստոս անցկացված ամսական կտրվածքով իրականացված գնահատումների հանրագումարը:

Համաշխարհային տնտեսական ֆորումի Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցում 2025թ.

Հրապարակման տարի - 2025

Գնահատման տեսակ – Բիզնեսի գործադիր ղեկավարների հարցում

Տվյալներ տրամադրող – Համաշխարհային տնտեսական ֆորում

Ընկերությունների գործադիր տնօրենների հարցումը Համաշխարհային տնտեսական ֆորումի բիզնեսի գործադիր ղեկավարների տարեկան կտրվածքով անցկացվող հարցումն է: Ժամանակի ընթացքում հարցումն ընդլայնվել է՝ ընդգրկելով տվյալների նոր խմբեր, որոնք էական են Համաշխարհային գլոբալ մրցունակության (ՀԳՄ - GCI) համաթիվը և Ֆորումի այլ համաթվերը հաշվարկելու համար:

Կոռուպցիային առնչվող հարց(եր)

Հարցվողները 1-ից 7 սանդղակի վրա, որտեղ 1-ը նշանակում է շատ հաճախ (տարածված), իսկ 7-ը՝ երբեք, պետք է գնահատեն հետևյալ երկու հարցերի պատասխանները.

1. Ձեր երկրում որքանո՞վ է հաճախ ընկերությունների կողմից չփաստաթղթավորված հավելավճարներ կամ կաշառքներ տալը՝ կապված հետևյալի հետ.

ա/ ներմուծում և արտահանում

բ/ կոմունալ ծառայություններ

գ/ հարկերի տարեկան վճարումներ

դ/ հանրային գնումներում մրցույթների շահում, լիցենզիաների տրամադրում

ե/ դատական բարենպաստ որոշումների ընդունում

2. Ձեր երկրում որքանո՞վ է տարածված կոռուպցիայով պայմանավորված պետական միջոցների ուղղումը ընկերություններին, անհատներին կամ խմբերին:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված երկրների թիվը և տվյալների հավաքագրման ժամանակահատվածը

Հարցումն անցկացվել է 2025թ. մարտից օգոստոս ընկած ժամանակահատվածում: ԿԸՀ համաթվի հաշվարկման համար անհրաժեշտ կոռուպցիային առնչվող վերը նշված երկու հարցերի վերաբերյալ վավեր տվյալներ հավաքագրվել են 116 երկրներից:

Ժողովրդավարության բազմազանության ծրագիր 2025 թ.

Հրապարակման տարի - 2025

Գնահատման տեսակ – Փորձագիտական հարցում

Տվյալներ տրամադրող – Գյոթեբորգի Համալսարան, V-DEM ինստիտուտ և Նոտր Դամի համալսարան

Ժողովրդավարության բազմազանությունը (Վ-Դեմ - V-Dem) իրենից ներկայացնում է ժողովրդավարության կոնցեպտուալիզացիայի և չափման նոր մոտեցում: Վ-Դեմ նախագծի միջոցով գեներացվում է բազմաչափ և խմբավորված այնպիսի տվյալների բազա, որն արտացոլում է ժողովրդավարության, որպես ընտրությունների պարզ առկայությունից ավելին ենթադրող կառավարման համակարգի, հայեցակարգի բարդությունը: Նախագիծը տարբերակում է ժողովրդավարության յոթ բարձր մակարդակի սկզբունքներ, այն է, ընտրական, ազատական, մասնակցային, խորհրդակցական, հավասարարական (էգալիտար), մեծամասնական և կոնսենսուսային, և հավաքագրում է տվյալներ՝ դրանք չափելու համար:

Կոռուպցիային առնչվող հարց(եր)

Որքանո՞վ է տարածված քաղաքական կոռուպցիան:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված երկրների թիվը և տվյալների հավաքագրման ժամանակահատվածը

ԿԸՀ 2024թ.-ի համար օգտագործվել են Վ-Դեմ-ի տվյալների 179 երկրների համար, որոնք հավաքագրվել են 2024թ. հունվարից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում:

Կոռուպցիայի ընկալման համաթիվ 2025: Օգտագործված աղբյուրների աղյուսակ

Աղբյուր	Ժամանա-կահատված	Հետազոտության հիմնական ուղղվածությունը	Երկրների/ տարածք-ների թիվ
Բերթելսմանի հիմնադրամի 2026թ. տրանսֆորմացիոն համաթիվ	2023թ. հունվար - 2025թ. հունվար	Կոռուպցիայի կանխարգելում և կոռուպցիոն հանցագործությունների քրեական հետապնդման իրավակիրառ պրակտիկա	137
Ֆրիդոմ Հաուսի Անցումային փուլում գտնվող պետություններ 2024թ	2023թ. հունվար - դեկտեմբեր	Բյուրոկրատական քաշքշուկ, ազդարարների պաշտպանություն, շահերի բախումը կանխարգելող մեխանիզմներ, շուկայի մանիպուլացում իշխանությունների կողմից և հակակոռուպցիոն օրենսդրության կիրարկում	29
Գլոբալ Ինսայթի Երկրի ռիսկայնության 2024 թ.վարկանիշ	2023թ. հոկտեմբեր - դեկտեմբեր	Կաշառակերության ռիսկեր արտահանման/ներմուծման գործընթացներում, հանրային գնումների պայմանագրերի ձեռքբերում և գործարարությանն առնչվող այլ գործունեություն	207
Փոլիթիքլ Ռիսքս Սերվիսիզ Գրուփ Ինթերնեշնլի Երկրի ռիսկայնության 2025թ. ուղեցույց	2024թ. սեպտեմբեր - 2025թ. օգոստոս	Կոռուպցիան չափից դուրս հովանավորչության, նեպոտիզմի, պաշտոնների վաճառքի, «դու ինձ, ես քեզ» գործարքների, կուսակցությունների գաղտնի ֆինանսավորման տեսքով, ինչպես նաև սերտ կապեր բիզնեսի և քաղաքականության միջև	141
Համաշխարհային տնտեսական ֆորումի Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցում 2025թ.	2025թ. մարտ - օգոստոս	Կաշառակերություն և հանրային միջոցների յուրացում	116

Ժողովրդավարության բազմազանության ծրագիր 2025թ.	2024թ. հունվար - դեկտեմբեր	Կոռուպցիան իշխանության գործադիր, օրենսդիր և դատական ճյուղերում	179